Մեր շնորհաւորութիւնները երկու խօսեցեալներուն և իրենց ընտանիքին։

## ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ի Սամսոն հանգուցեալ մհի. Յակոբ էֆ. Կիւտիկեանի յուղարկաւորութեան առթիւ փոխան ծաղկեպսակի 60 ղրշ. նուիրած է Հիւանդանոցիս Մեծ. Միհրան էֆ. Ընգապապեան։

(Կնքէ+)

Յօդուածագիրներէն կը խնդրուի թուղթին միայն մէկ երեսին վրայ կարդացուելիք մելանով գրել, տպարանական դիւրութեան համար։

# ԲԱՐԻԶԻ ՊՕՐՍԱՆ

BOURSE DE PARIS

ԱՅՍ ԳԻՇԵՐՈՒԱՆ

20 Յունիս 1902

| | | |
|---|---|---|
| Ֆրանս. 3% | (3% Français) | 101 77 |
| Րէժի | (Tab. Turcs) | 321 — |
| Գօնսօլիտ. | (R. Turque D.) | 26 75 |
| Երկաթուղի | (Lots Turcs) | 115 — |
| Պանք. Օթ. | (Banque Ott.) | 570 — |
| Թրանսվալ | (Transvaal) | 151 — |

# ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԷՆ

Ժամանակէ մը ի վեր բաւական զարմանալի խնդիր մը յարուցուած է Վանի առաջնորդէին շուրջը, այնպէս որ այսօր օրաթերթ կ արդացողներէն զին-...

# ՀԱՅ-ԲՈՂՈՔԱԿԱՆՆԵՐԷՆ

Բրիտանական նահանգային հոգեւոր ժողովին անդամակցող երէցներէ ոմանք իրենց եկեղեցիներուն նիւթական պէտքերը լրացնելու համար, նպաստ ժողովելու ելած և յաջող արդիւնք ձեռք բերած են։

—Պատ. Ֆիլեան, որ շրջուն քարոզիչ է Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պատ. Յ. Ճինիլեանի հետ պիտի այցելէ այն տասներկու փոքրիկ եկեղեցիները որոնք հոգեւոր մշակներու կարօտը կը քաշեն։

—Արեւելեան որբանոցի տնօրէնը, այս վերջերս քիչ մը աւելի խօսիլ ու գրել տուաւ իր ու որբանոցին վրայ. Ժողովը նկատի առնելով այդ գծութեան վայրին խնդիրը, երկու անձեր Պրուսա ղրկեց քննութեան համար։

—Գաղատիոյ Հայ-բողոքականները, որ յարմար աղօթատեղիի մը պէտք ունէին, շնորհիւ Պատ. Հ. Օսեանի ջանքերուն, հիմա շէնք մը գնած են, ուր կրօնական պաշտօն կը կատարեն։

—Մարզուանի վաճառականներէն Պօղոս էֆ. Թօրիկեան, առեւտրական գործերով Պոլիս եկած է։ Հ.

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԻՊԻԼԷՆՈՐԹ, 19 յունիս.—Սաքսոնիոյ Թագաւորը մեռաւ իրիկուան ժամ 8.5ին։

ԲԱՐԻԶ.— Ֆրանսայի Ծերակոյտին մէջ, զինուորական երկու տարուան ծառայութեան վրայ վիճաբանութիւն կատարուած ատեն, քանի մը ատենաբաններ դէմ խօսեցան այդ առաջարկութեան։ Մ. Լամզէլլի ըսաւ թէ երկու տարուան զինուորական ծառայութիւն երբ հաստատուի, Ֆրանսայի զինուորական ոգին պիտի ոչնչանայ։ Պատերազմական նախարար Անտրէ զօրավարը սապէս պատասխանեց.—«Ֆրանսացի զինուորին համար միեւնոյն բանն է։ Մեր օրէնքները գերմանականէն աղէկ են և Ֆրանսական զինուորը գերմանականէն աւելի կ՛արժէ»։ Այս խօսքերը բուռն ծափահարութիւններով ողջունուեցան։ Վիճաբանութեան շարունակութիւնը վաղուան յետաձգուեցաւ։

—Երեսփ. Ժողովը 298 քուէարկողներու 199 քուէներով դեռ-ատենապետ ընտրեց Մ. Լոքրուան։

—Ֆոռ-տը-Ֆրանսէն կը հեռագրեն թէ ահագին փոթորիկ մը բոլորովին կործաներ է Պաս-Բուանթի մէկ մասը։ Մարդու զոհ չկայ։

—Ֆրանսայի առեւտրական նախարար Մ. Թրույեօ կ՛ուսումնասիրէ այն միջոցները որոնք անհրաժեշտ են՝ ամերիկեան, անգլիական ու գերմանական շոգենաւային Ընկերութեանց սէնտիքային հետեւանքներուն հանդէպ։

ՔԻԷՎ.—Պուլկարիոյ իշխանը այցելութիւն տուաւ Քիէվի մետրապոլիտին ու զինուորական բանակետղին. իրիկուան ճամբայ ելաւ դէպի Վարշավիա։

ՊԵՏԵՐՍՊՈՒՐԿ.—Ռուսիոյ պաշտօնաթերթը կը հրատարակէ կայս. այն Ուքազը, որով Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանը ռուսական 54րդ զօրագունդին գնդապետ անուանուած է։

ԼՈՆՏՈՆ.—Լորտ Սոլզպէրի առողջական վիճակը թեթեւապէս բարուքեցաւ։

—«Մորնինկ Բոսթ» գրոյց մը կը յիշէ թէ Քրոնեէ Պօէր զօրավարը որ Սէնթ-Էլէն աքսորուած է, Վէրէնիկինկ ղրկուեր և հոն մեծապէս աշխատեր է հաշտութեան կնքման։

—Քուպայի երկրագործները գործաւոր չունին, որով սովէ կը վախցուի։

ՀՌՈՄ.—Իտալիոյ նախկին նախարարապետ Բէլլու զօրավարը, բազմաթիւ անձերու և մամուլոյ պատերազմական նախարարին թախանձանքներուն հակառակ, որոշեր է թողուլ զինուորական ասպարէզը։

ՕՐԱՆԺ (Ալժէրիա).— Իւվէյրիէէն կը հեռագրեն թէ Հըղըր-էլ-Պաղրի անուն տեղը աւազակներ յարձակեր են ութ հոգիէ բաղկացած կարաւանի մը վրայ, անոնց ամէնքն ալ սպաննելով։ Ամիս մը առաջ նոյն տեղը հինգ հոգի սպաննուած էին։ Ֆէճի անուն տեղը աւազակները աւելցած են։

# ՍԱՐՐԱՖԻՑԷ

## ԳԱԼԱԹԱ ՊՕՐՍԱՍԸ

| | |
|---|---|
| Էսհ. Ում. տիւն ազն. գաբ. | 29—01½ |
| » » էն երւքսէք | 29—02½ |
| » » էն աչաղը | 29—01 |
| Րումէլի չըմէն. ազնմ. գրնտ. | 113—⅞ |
| » » էն երւքսէք | 114— |
| » » էն աչաղը | 113—¾ |

## ՊԱՆԳԱ ԱԳՍԻՕՆԼԱՐԸ

| | |
|---|---|
| Րէժի ագսիօնը Օս. լիր. | — |
| Սիկարէթ Ա. | 0—19 |
| » Բ. | —89 |
| Թրամվայ | 5—37½ |
| Ժուխանա | 1—42 |
| Օպլիկասիօն Թրամվայ | 485— |
| Ասիւրանս | 3—45 |
| Փօրթօրասիօն | 0—08.6 |
| Գօմմէրսիալ | 0—09.6 |
| Լօրիօմ | 73—50 |
| Պանգ Նասիօնալ տը Կրէգ | 421— |
| Թրանսվաալ | 149— |
| Րըխթըմ Թաքվիլաթը | 493—50 |
| Անատօլը չըմ. ագսիօնը | 10—75 |

## ԱԳՉԷԼԷՐԻՆ ՖԻԱԹԸ

| | |
|---|---|
| Օսմ. լիրասը 100 ղչ. տան | ղչ. բր. |
| Պէյազ մէճիտիյէ ֆարգը | 108—06 |
| Մէթալիք | 102— |
| Ինկիլիզ լիրասը | 110—10 |
| Ֆրանսըզ ալթունը | 87—27 |
| Բօլ | 90— |
| Գրէմից ալթունը | 51—06 |
| Գարպօն գայմէսի | 8—57 |

## ԵՎՐՕՊԱ ՊՕՐՍԱՍԸ

Լոնտրա 19 յունիս

| | |
|---|---|
| Ինկ. էսհամը Ինկ. լիրասը | 96—63 |
| Օսմ. էհսամը գաբանտը | 26—12 |
| » » Բ | 28—12 |
| « » Գ | 52— |
| Օսմանլը Պանգասը | 12—75 |
| Մըսըր Տույ. մութթահըտէ | 108— |
| Պուլկար խաթիգրաղը | 89—97 |
| Գամպիօ Բարիզ 3 այ վատէ | 25—37½ |
| Թրանսվաալ | 6— |
| Շարթրէթ | 3—78 |

Բարիզ 19 յունիս

| | |
|---|---|
| Ֆրնս էսհ. 3% ֆր. | 101—87 |
| Եէնի Օսմ. էսհամը գաբանտը | 26—75 |
| Րումէլի չըմէնտըֆէրի | 115— |
| Օսմանլը Րէժիսի էսհամը | 322— |
| » Պանգասը | 571— |
| Գչիտի Լիօնէ | 1054— |
| Իթալիա էսհամը | 103—45 |
| Բուիօրիթէ Թիւրք | — |
| Օսմանիյէ | — |
| Տուան Օթօման | 526— |
| Սբանեօլ | 81—97 |
| Թրանսվալ | 152— |
| Էժիբսիէն իւնիֆիէ | 110—80 |
| Շարթրէթ | 98— |

## ԳԱՄՊԻՕ

| | |
|---|---|
| Լօնտրա | 110—17½ |
| Բարիզ 3 այ վատէլի | 22—80 |
| Ֆիօրէն Մանտա | 21—78 |

Վիէննա 19 յունիս

| | |
|---|---|
| Լօնտրա իւզէրինէ գամպիօ | 240—20 |
| Րումէլի չըմէնտըֆէրի ֆր. | 109— |
| Օսմանլը Րէժի ագսիօնը | 294— |

Պէրլին 19 յունիս

| | |
|---|---|
| Րումէլի չըմէնտըֆ. (մարգ) | 113—50 |
| Լօնտրա իւզէրինէ գամպիօ | 20—320 |

«ՄԱՆՉՈՒՄԷ»ՆԻՆ ԹԷՖՐԻԳԱՍԸ (49)

# ՄԻՒՍԹԱՆԹԸԳԸՆ ԷՍՐԱՐԸ

ՄԻՒԷԼԼԻՖԻ

ՊԻԷՐ ՏԷԼԳՈՒՐ

Ջ.

ՎԱԼԻՏԷ ԻԼԷ ՆԸՇԱՆԼԸ

—Սիզէ սօնրա միւթալէամը կիւլմէն անլաթըրըմ, օ վագըթ սիզտէ պէն ֆիքրտէ պուլունաճագսընըզ։

—Լաքին նէ՞ եաբմալը։

—Ցիյնէ Մարի. տիւն ագչամ սէվկիւլիւմին թալէյի իգթիզասընճա տէրտէսթ խտլտինի իչինթարիմ անտէ,

